

Առաջարկներ Ընտրական օրենսգրքի կարգավորումների վերաբերյալ

Ստորև ներկայացվում են ՀՀ ընտրական օրենսգրքի որոշ խնդրահարույց իրավակարգավորումներ, որոնց մեծ մասն արձանագրվել է 2017 թվականի ապրիլի 2-ի խորհրդարանական, ինչպես նաև դրան նախորդած ժամանակահատվածում ՀՀ-ում անցկացված այլ ընտրությունների ընթացքում: Մինևույն ժամանակ ներկայացվում են բարձրացված խնդիրների լուծմանն ուղղված առաջարկներ՝ Ընտրական օրենսգրքի փոփոխությունների և լրացումների նախագծի մշակման շրջանակներում դրանք ներառելու նպատակով:

1. Տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահների և քարտուղարների պաշտոնների բաշխման վերաբերյալ. ՀՀ ընտրական օրենսգրքով (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) բավականին լայն լիազորություններ են վերապահված տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահներին և քարտուղարներին:

1.1. Այսպես՝ Օրենսգրքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ընտրական հանձնաժողովի աշխատանքները ղեկավարում է հանձնաժողովի նախագահը, իսկ նրա հանձնարարության կամ բացակայության դեպքում՝ տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարը: Օրենսգրքի 61-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը պարտավոր է քվեարկության ընթացքում ապահովել Օրենսգրքով նախատեսված պահանջների կատարումը և անհրաժեշտ կարգուկանոն հաստատել տեղամասային կենտրոնում: Օրենսգրքի 65-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովի նախագահը կազմակերպում և վերահսկում է քվեարկության անցկացումը, անհրաժեշտության դեպքում օժանդակում գործառույթ իրականացնող անդամներին, փոխարինում նրանց և մասնագետին ժամանակավոր բացակայության դեպքում: Հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ հանձնաժողովի քարտուղարը գրառումներ է կատարում գրանցամատյանում, օժանդակում գործառույթ իրականացնող անդամներին, փոխարինում նրանց և մասնագետին ժամանակավոր բացակայության դեպքում: Օրենսգրքի 71-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը և քարտուղարը ընտրական փաստաթղթերի պարկը, ընտրողների ցուցակների փաթեթը, չօգտագործված քվեարկության ծրարների փաթեթը, չօգտագործված քվեաթերթիկները, քվեարկության արդյունքների արձանագրության երկու օրինակը, գրանցամատյանը, հանձնաժողովի կնիքը, տեխնիկական սարքավորումը քվեարկության ավարտից հետո՝ ոչ ուշ, քան 14 ժամվա ընթացքում, ներկայացնում են տարածքային ընտրական հանձնաժողով: Օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տարածքային ընտրական հանձնաժողովում ստուգվում է ընտրական տեղամասերում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունները կազմելու վավերականությունը, իսկ թվաբանական սխալների առկայության դեպքում տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը կամ քարտուղարը

վերացնում են այդ սխալները՝ ուղղումները վավերացնելով իրենց ստորագրություններով: Օրենսգրքի 71-րդ հոդվածին համապատասխան՝ Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ տեղամասում քվեարկության արդյունքների ամփոփման նիստին ներկա գտնվելու իրավունք ունեցող անձանց պահանջով նրանց տրվող՝ ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրությունից քաղվածքը վավերացվում է հանձնաժողովի նախագահի և քարտուղարի ստորագրություններով և հանձնաժողովի կնիքով:

1.2. Ելնելով վերոգրյալ իրավակարգավորումներից, ինչպես նաև համապետական և ՏԻՄ ընտրությունների ընթացքում նշված դրույթների կիրառման պրակտիկայից՝ կարող ենք արձանագրել, որ տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը և քարտուղարը զգալի, իսկ շատ դեպքերում որոշիչ դերակատարություն են ունենում ընտրությունների նախապատրաստման, անցկացման և ընտրությունների արդյունքների ամփոփման գործընթացներում: Դրա հետ միասին, ըստ ՀՀ ընտրական օրենսգրքի 44-րդ հոդվածի, տեղամասային ընտրական հանձնաժողովներում նախագահների և քարտուղարների պաշտոնները բաշխվում են Ազգային ժողովում խմբակցություն ունեցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) միջև: Յուրաքանչյուր կուսակցությանը (կուսակցությունների դաշինքին) հասանելիք տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի և քարտուղարի պաշտոնների թիվը որոշվում է մի բանաձևի հիման վրա, որի հիմքում դրված է Ազգային ժողովի կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ստացած մանդատների թիվը: Նշված բանաձևի հիման վրա՝ 2017 թվականի ապրիլի 2-ի ընտրությունների ժամանակ ձևավորված **2009** տեղամասային ընտրական հանձնաժողովներից, Հայաստանի Հանրապետական կուսակցությանը բաշխվել է **1786** տեղամասային ընտրական հանձնաժողովներում հանձնաժողովի նախագահի կամ քարտուղարի պաշտոն:

1.3. Թեև ընտրական օրենսգրքով ամրագրված է, որ ընտրական հանձնաժողովի անդամն ընտրական հանձնաժողովում գործում է անկախ և չի ներկայացնում իրեն նշանակողին, այնուամենայնիվ, ՀՀ-ում անցկացված բազմաթիվ ընտրությունների փորձն ակնհայտորեն վկայում է այն մասին, որ մեծամասամբ հանձնաժողովների նախագահները և քարտուղարները կողմնակալ վարքագիծ են դրսևորել իրենց նշանակող կուսակցության օգտին: Հարկ է նշել նաև, որ տեղամասային ընտրական հանձնաժողովների ղեկավար պաշտոնների արդարացի և հավասարակշռված բաշխման անհրաժեշտությունը արձանագրվել է ԵԽ Վենետիկի հանձնաժողովի և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ կողմից ՀՀ ընտրական օրենսդրության վերաբերյալ տրված եզրակացություններով (CDL-AD(2011)032, CDL-AD(2017)029), ինչպես նաև ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ դիտորդական առաքելության 2017 թվականի ապրիլի 2-ի խորհրդարանական ընտրությունների վերջնական զեկույցով:

Առաջարկ. Տեղամասային ընտրական հանձնաժողովների անկախությունը և անկողմնակալությունը բարձրացնելու նպատակով

առաջարկվում է տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահների և քարտուղարների պաշտոնների բաշխումն իրականացնել նույն՝ տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամների նշանակման սկզբունքով, այսինքն, Ազգային ժողովում խմբակցություն ունեցող յուրաքանչյուր կուսակցությանը (կուսակցությունների դաշինքին) ընձեռնվի հավասար քանակով հանձնաժողովի նախագահ և քարտուղար նշանակելու հնարավորություն:

2. Նախընտրական հիմնադրամի և հիմնադրամի միջոցների օգտագործման նկատմամբ վերահսկողության վերաբերյալ. Ընտրությունների ժամանակ թեկնածուները, ընտրություններին մասնակցող կուսակցությունները պարտավոր են բացել նախընտրական հիմնադրամ: ՀՀ ընտրական օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ թեկնածուները, ընտրություններին մասնակցող կուսակցությունները զանգվածային լրատվության միջոցներով նախընտրական քարոզչություն իրականացնելու, նախընտրական ժողովներ և ընտրողների հետ հանդիպումներ կազմակերպելու նպատակով դահլիճների, տարածքների վարձակալման (բացառությամբ ընտրական շտաբների), քարոզչական պաստառի, քարոզչական տպագիր և այլ նյութերի պատրաստման (տեղադրման), ձեռքբերման, ընտրողներին տրամադրվող քարոզչական բոլոր տեսակի նյութերի (ներառյալ՝ տպագիր նյութերի) պատրաստման ֆինանսավորման համար օգտագործում են միայն նախընտրական հիմնադրամի միջոցները: Այդ նպատակով նախընտրական հիմնադրամից կատարվող ծախսերի առավելագույն չափը սահմանվում է ընտրական օրենսգրքով:

2.1. Նախընտրական քարոզչության իրականացման նպատակով կատարվող ծախսերի առավելագույն չափի սահմանումը թեկնածուների և կուսակցությունների հնարավորությունների հավասարության ապահովման նպատակունի¹:

Օրինակ՝ Ազգային ժողովի ընտրությունների դեպքում նախընտրական քարոզչության ընթացքում ընտրություններին մասնակցող կուսակցությունը (կուսակցությունների դաշինքը) զանգվածային լրատվության միջոցներով նախընտրական քարոզչություն իրականացնելու, նախընտրական ժողովներ և ընտրողների հետ հանդիպումներ կազմակերպելու նպատակով դահլիճների, տարածքների վարձակալման (բացառությամբ ընտրական շտաբների), քարոզչական պաստառի, քարոզչական տպագիր և այլ նյութերի պատրաստման (տեղադրման), ձեռքբերման, ընտրողներին տրամադրվող քարոզչական բոլոր տեսակի նյութերի (ներառյալ տպագիր նյութերը) պատրաստման ֆինանսավորման համար իրավունք ունի ծախսելու նվազագույն աշխատավարձի 500 000-ապատիկը չզերազանցող գումար²:

¹ CODE OF GOOD PRACTICE IN ELECTORAL MATTERS GUIDELINES AND EXPLANATORY REPORT Adopted by the Venice Commission at its 52nd session (Venice, 18-19 October 2002)

² Ընտրական օրենսգիրք, հոդված 92

Այնուամենայնիվ, նախընտրական քարոզչության իրականացումը չի սահմանափակվում միայն Ընտրական օրենսգրքի 27-րդ հոդվածով սահմանված գործողություններով, այն կարող է իրականացվել նաև մի շարք այլ եղանակներով, այդ թվում՝ նախընտրական բնույթի համերգների, այլ հանրային միջոցառումների կազմակերպման միջոցով, ինչպես նաև նախընտրական քարոզչության հետ կապված կարող են կատարվել մի շարք այլ ծախսեր:

Այնուամենայնիվ, նման միջոցառումների իրականացման համար ծախսերի կատարման առավելագույն չափ ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված չէ, մինչդեռ այդ ծախսերը կարող են հավասար լինել կամ նույնիսկ գերազանցել նախընտրական քարոզչության՝ Ընտրական օրենսգրքով թվարկված գործողությունների հետ կապված ծախսերը՝ խախտելով ընտրություններին մասնակցող թեկնածուների և կուսակցությունների հնարավորությունների հավասարության սկզբունքը: Բացի այդ, նման իրավակարգավորումը ուղղակի ազդեցություն ունի նախընտրական քարոզչության ֆինանսավորման թափանցիկության և վերահսկողության հնարավորությունների վրա: Որևէ պատճառաբանություն չունի նաև ընտրական շտաբների վարձակալության ծախսերը նախընտրական հիմնադրամի միջոցների հաշվին կատարելու պահանջ չնախատեսելը, ինչպես նաև այդ ծախսերը որպես հայտարարագրման ոչ ենթակա ծախս սահմանելը:

Առաջարկ. Ընտրություններին մասնակցող թեկնածուների և կուսակցությունների կողմից նախընտրական քարոզչության իրականացման փուլում հնարավորությունների հավասարության ապահովման, ինչպես նաև նախընտրական քարոզչության թափանցիկության ապահովման նպատակով առաջարկվում է սահմանել նախընտրական քարոզչության իրականացման հետ կապված բոլոր ծախսերի կատարման պահանջ՝ միայն նախընտրական հիմնադրամի միջոցների հաշվին: Բացի այդ, առաջարկվում է սահմանել նախընտրական հիմնադրամի միջոցների ընդհանուր առավելագույն չափ, ինչը կհանգեցնի նախընտրական քարոզչության իրականացման հետ կապված բոլոր ծախսերի համար առավելագույն չափի ամրագրմանը: Նույն հիմնավորումներով անհրաժեշտ է նախընտրական հիմնադրամից կատարվող բոլոր ծախսերը սահմանել որպես հայտարարագրման ենթակա ծախսեր:

3. Ընտրությունների արդյունքների վրա ազդեցություն ունեցող խախտման բնորոշման և դրա հետևանքներին առնչվող հարցերի վերաբերյալ.

3.1. Ընտրական օրենսգրքով նախատեսված է ընտրությունների արդյունքների անվավեր ճանաչման ընթացակարգ, որի համաձայն՝ ընտրությունների արդյունքների անվավեր ճանաչման չափանիշ է սահմանվել Օրենսգրքի այնպիսի խախտումների առկայությունը, որոնք կարող էին ազդել ընտրությունների արդյունքների վրա (Ընտրական օրենսգրքի 48-րդ, 101-րդ, 118-րդ, 119-րդ և 142-րդ հոդվածներ): Նախընտրական քարոզչության փուլում նախատեսված խախտումների վերաբերյալ սահմանված չափանիշը հետյալն է՝ եթե առկա է նախընտրական քարոզչության սահմանված կարգի այնպիսի խախտում, որը կրում է շարունակական

բնույթ, և թույլ տրված խախտումը կարող է էական ազդեցություն ունենալ ընտրությունների արդյունքների վրա, կամ թույլ տրված խախտման հետևանքները հնարավոր չէ վերացնել, և թույլ տրված խախտումը կարող է էական ազդեցություն ունենալ ընտրությունների արդյունքների վրա³:

3.2. Դրա հետ միասին ՀՀ ընտրական օրենսգրքով չեն սահմանվել ընտրությունների արդյունքների վրա էական ազդեցությունը որոշելու չափանիշները, ինչը պարարտ հող է ստեղծում այս եզրույթների կամայական և հայեցողական կիրառման, ինչպես նաև ընտրական հանձնաժողովների կողմից չպատճառաբանված որոշումների կայացման համար: Ընտրական հանձնաժողովների՝ ընտրությունների արդյունքների ամփոփման, տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում արձանագրված խախտումների վերաբերյալ և սեփական նախաձեռնությամբ խախտման փաստերը որպես հաղորդում քննելու մասին կայացրած որոշումների ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ ընտրախախտումների՝ ընտրությունների վրա էական ազդեցություն չունենալու վերաբերյալ եզրույթը ձևականորեն վկայակոչվում է որոշման եզրափակիչ հատվածում՝ առանց որևէ եղանակով հիմնավորելու, թե ինչի հիման վրա է ընտրական հանձնաժողովը կատարում այդ հետևությունը: Կարծում ենք, որ Ընտրական օրենսգրքով «ընտրությունների արդյունքների վրա էական ազդեցություն» հասկացության բացահայտված չլինելու, ազդեցության էական լինելը որոշելու համար անհրաժեշտ չափանիշների բացակայությունը նպաստավոր գործոն է ընտրությունների ընթացքում տեղի ունեցած ընտրախախտումները կամայական գնահատելու և առանձին ընտրատեղամասերում կամ առհասարակ Հանրապետության մակարդակով ընտրությունների արդյունքները անվավեր ճանաչելու դիմումներն անհիմն մերժելու համար:

3.3. Այս համատեքստում հարկ ենք համարում անդրադառնալ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեի Միջազգային ընտրական չափանիշների կիրառման վերաբերյալ ընդհանուր մեկնաբանությանը, որով նշվել է, որ կասկածների առկայության դեպքում պետք է հնարավոր լինի վիճարկել և անվավեր ճանաչել ընտրությունների վիճահարույց արդյունքները և կազմակերպել վերահաշվարկ կամ նոր ընտրություններ ընտրատեղամասերից որևէ մեկում կամ բոլորում: Այդ նպատակով, օրենքը պետք է սահմանի դատական վերանայման կամ համարժեք ընթացակարգեր՝ հստակ և միանշանակորեն կարգավորվող իրավիճակների համար⁴:

³ Ընտրական օրենսգրք, հոդված 19

⁴ Մանրամասն տես՝ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտե (1981-2014թթ.), Ընդհանուր մեկնաբանություններ, http://tbinternet.ohchr.org/_layouts/treatybodyexternal/TBSearch.aspx?Lang=%20en&TreatyID=%208&DocTypeID=11

3.4. Հարկ ենք համարում համեմատական փորձի շրջանակներում անդրադառնալ նաև Ռուսաստանի Դաշնության ընտրական օրենսդրությամբ սահմանված՝ ընտրությունների արդյունքներն անվավեր ճանաչելու չափանիշներին: Այսպես՝ օրենսդրությամբ նախատեսվում են ընտրությունների արդյունքների անվավեր ճանաչման որոշակի հստակեցված հիմքեր.

ա) ընտրողների ցուցակների կազմման կանոնների խախտում, եթե խախտումը թույլ չի տալիս վստահությամբ որոշել ընտրողների մասնակիցների կամարտահայտության արդյունքները.

բ) քվեարկության և քվեարկության արդյունքների որոշման կարգի խախտում, եթե խախտումը թույլ չի տալիս վստահությամբ որոշել ընտրողների կամարտահայտության արդյունքները.

գ) քվեարկության և ընտրողների ձայների հաշվարկման նկատմամբ դիտարկում իրականացնելու խոչընդոտները, եթե խախտումը թույլ չի տալիս որոշել ընտրողների կամարտահայտությունը.

դ) ընտրական հանձնաժողով կազմավորելու կարգի խախտում, եթե խախտումը թույլ չի տալիս բացահայտել ընտրողների կամարտահայտությունը.

ե) ընտրությունների վերաբերյալ Ռուսաստանի Դաշնության օրենսդրության մյուս խախտումները, եթե այդ խախտումները թույլ չեն տալիս բացահայտել ընտրողների իրական կամքը⁵:

Առաջարկ. Ելնելով վերոգրյալից՝ կարծում ենք, որ անհրաժեշտ է սահմանել ընտրական հանձնաժողովների կողմից կայացվող՝ ընտրությունների արդյունքների ամփոփման, տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում արձանագրված խախտումների վերաբերյալ և սեփական նախաձեռնությամբ խախտման փաստերը որպես հաղորդում քննելու մասին որոշումների հիմնավորված և պատճառաբանված լինելու պարտադիր պայման՝ հստակեցնելով, որ **որոշումը կարող է համարվել հիմնավորված և պատճառաբանված, եթե նրանում մանրամասն անդրադարձ է կատարվել ընտրախախտումների ընդգրկման ծավալին, խախտումներ կատարելու միջոցներին ու ձևերին, հաշվի է առնվել խախտումների լրջությունն ու ծանրությունը և յուրաքանչյուր դեպքում՝ կոնկրետ փաստական հանգամանքները:** Միննույն ժամանակ ՀՀ ընտրական օրենսգրքով անհրաժեշտ է առավել մանրամասն և հստակեցված կարգավորումներ և մեխանիզմներ նախատեսել՝ ընտրությունների արդյունքների վրա էական ազդեցություն ունեցող խախտումները բնորոշելու և ընտրությունների արդյունքների վրա դրանց հնարավոր ազդեցությունը գնահատելու համար:

4. Ընտրական հանձնաժողովներում ապացուցման բեռի բաշխման և ի պաշտոնն ապացույցներ ձեռք բերելու խնդրի վերաբերյալ.

⁵ Մանրամասն տես՝ http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_37119/:

4.1. ՀՀ ընտրական օրենսգրքի 49-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն. «Ընտրական հանձնաժողովների որոշումները, գործողությունները (անգործությունը) վերադաս ընտրական հանձնաժողով բողոքարկելու դեպքում բողոք ներկայացնող կողմը կրում է իր ներկայացրած փաստական հանգամանքների ապացուցման բեռը, իսկ ընտրական հանձնաժողովը՝ իր կայացրած որոշման հիմքում ընկած փաստական հանգամանքների ապացուցման բեռը: Բողոքը քննող ընտրական հանձնաժողովն ի պաշտոնե կարող է ապացույցներ հայթայթել: Սույն մասով սահմանված կանոնները վերաբերում են նաև ընտրական տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու կամ ընտրությունների արդյունքներն անվավեր ճանաչելու մասին դիմումներին»:

4.2. Ապացուցման բեռի բաշխման վերոգրյալ կարգը հիմնավորված և իրավաչափ չէ, քանի որ ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված բողոքների, դիմումների ներկայացման և դրանց քննության սեղմ ժամկետները, ինչպես նաև օրենսդրությամբ ընտրախախտումների վերաբերյալ ապացույցներ ձեռք բերելու սահմանափակ հնարավորությունները հաշվի առնելով՝ շատ դեպքերում այս պարտականության իրականացումը դառնում է ոչ իրագործելի՝ հանգեցնելով ընտրական իրավունքի արդյունավետ պաշտպանության միջոցի իրավունքի խախտմանը, ինչպես նաև անհրաժեշտ հիմքերի առկայության դեպքում ընտրությունների արդյունքների վերանայման հնարավորության բացառմանը: Մինևույն ժամանակ ընտրական հանձնաժողովի կողմից ի պաշտոնե ապացույցներ հայթայթելու հայեցողական լիազորությունը չի կարող բավարար և արդյունավետ միջոց հանդիսանալ ապացուցման բեռի բաշխման սահմանված կարգը հավասարակշռելու տեսանկյունից: Այս խնդրին անդրադարձել են նաև ԵԽ Վենետիկի հանձնաժողովը և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը՝ ՀՀ ընտրական օրենսդրության վերաբերյալ տրված CDL-AD(2011)032 եզրակացությամբ: Ավելին, ՀՀ-ում անցկացված ընտրությունների ընթացքում ընտրական հանձնաժողովների գործունեության փորձը և կայացված որոշումները վկայում են այն մասին, որ ընտրական հանձնաժողովները շատ հազվադեպ դեպքերում են օգտվում վերոնշյալ հայեցողական լիազորությունից՝ հաճախ այս լծակը օգտագործելով միակողմանի և կողմնակալ եղանակներով:

Առաջարկ. Կարծում ենք, որ անհրաժեշտ է ՀՀ ընտրական օրենսգրքի 49-րդ հոդվածի 6-րդ մասում կատարել փոփոխություն՝ ընտրական հանձնաժողովի կողմից ի պաշտոնե ապացույցներ ձեռք բերելու հայեցողական լիազորությունը վերջինիս համար սահմանելով որպես իմպերատիվ պարտականություն: Միաժամանակ ապացուցման բեռի նախատեսված կարգի փոխարեն ամրագրել հավաստիության կանխավարկածի սկզբունքը, այն է՝ Ընտրական հանձնաժողովի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ անձի ներկայացրած տվյալները, տեղեկությունները համարվում են հավաստի բոլոր դեպքերում, քանի դեռ հանձնաժողովը հակառակը չի ապացուցել: Եթե հանձնաժողովը հիմնավոր կասկածներ ունի անձանց ներկայացրած

տվյալների, տեղեկությունների իսկության վերաբերյալ, ապա ինքը պարտավոր է ինքնուրույն և իր հաշվին ձեռնարկել միջոցներ՝ դրանց իսկության մեջ հավաստիանալու համար:

5. ՀՀ Կենտրոնական և տարածքային ընտրական հանձնաժողովների անդամներին առաջադրվող պահանջների վերաբերյալ.

5.1. ՀՀ ընտրական օրենսգրքի 42-րդ հոդվածի 3-րդ մասի և 43-րդ հոդվածի 3-րդ մասի առաջին երկու կետերով սահմանվում են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի (այսուհետ նաև՝ ԿՀՀ) և Տարածքային ընտրական հանձնաժողովի (այսուհետ նաև՝ ՏՀՀ) անդամին առաջադրվող առաջնային մասնագիտական չափանիշները՝ բարձրագույն իրավաբանական կրթություն կամ իրավունքի ոլորտում գիտական աստիճան ունենալը: Մինևույն ժամանակ 42-րդ հոդվածի 3-րդ մասի և 43-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ և 4-րդ կետերի համաձայն՝ վերոնշյալ չափանիշների բացակայությունը կարող է կոմպենսացվել պետական մարմիններում համապատասխանաբար 5 և 3 տարվա աշխատանքային ստաժի առկայությամբ, այնինչ պետական մարմիններում 3, 5 և նույնիսկ ավել տարվա աշխատանքային ստաժի առկայությունը որևէ պարագայում չի կարող կոմպենսացնել անձի իրավաբանական գիտելիքների պակասը, քանի որ ԿՀՀ և ՏՀՀ անդամի լիազորությունների պատշաճ իրականացումը, հատկապես՝ ընտրական ոլորտում վարչաիրավական կամ քրեաիրավական բնույթի խախտումների կապակցությամբ իրենց լիազորությունների շրջանակներում որոշումներ կայացնելը, առավելևս՝ հանրային այնպիսի բարձր նշանակություն ունեցող որոշումներ ընդունելը, ինչպիսին է ընտրությունների արդյունքների ամփոփման կապակցությամբ կայացվող որոշումները. դրանց օրինականությունն ու օբյեկտիվությունը մեծապես կախված են հենց վերջիններիս իրավաբանական գիտելիքներից և իրավական վերլուծության ունակություններից:

Առաջարկ. Առաջարկվում է ՀՀ ընտրական օրենսգրքի 42-րդ հոդվածի (ԿՀՀ կազմավորելու կարգը) 3-րդ մասի 3-րդ և 4-րդ կետերը, ինչպես նաև Օրենսգրքի 43-րդ հոդվածի (ՏՀՀ կազմավորելու կարգը) 3-րդ մասի 3-րդ և 4-րդ կետերը ճանաչել ուժը կորցրած: Մինևույն ժամանակ առաջարկվում է նաև Ընտրական օրենսգրքի 43-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի «վերջին 5 տարում առնվազն 2 տարվա մասնագիտական ստաժ» դրույթը փոխարինել «վերջին 5 տարում առնվազն 1 տարվա մասնագիտական ստաժ» դրույթով: Այս փոփոխության անհրաժեշտությունը մեծապես պայմանավորված է Օրենսգրքի 43-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ և 4-րդ կետերի ուժը կորցնելու արդյունքում հանձնաժողովների համալրման խնդրից հնարավորինս խուսափելու հանգամանքով: Բացի այդ, համարում ենք, որ 1 տարվա մասնագիտական ստաժը իրավաբանական բարձրագույն կրթություն ունենալու պահանջի հետ համադրությամբ լիովին բավարար են Տարածքային ընտրական հանձնաժողովի անդամի գործառույթները լիարժեք իրականացնելու համար:

5.2. Տարածքային ընտրական հանձնաժողովի կազմավորման կազմի վերաբերյալ.

ՀՀ ընտրական օրենսգրքի 43-րդ հոդվածի 6-րդ մասի 3-րդ կետով սահմանվում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից քննարկման ենթակա ՏՀՀ անդամների թեկնածուների ցանկը կրճատելու լիազորություն: Կենտրոնական ընտրական հանձնաժողովին վերապահելով ՏՀՀ անդամների թեկնածուների ցանկի կրճատման հայեցողական լիազորություն, Ընտրական օրենսգիրքը չի սահմանում այս լիազորության իրացման որևէ չափորոշիչ՝ հնարավորություն ստեղծելով բացարձակ կամայական գործելաձևի դրսևորման համար: Բացի վերոգրյալից՝ բացակայում է նաև ցանկի կրճատման իրավաչափ նպատակը՝ վերջիններիս ընտրության մրցակցային սկզբունքի որդեգրման պայմաններում:

Առաջարկ. Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է ուժը կորցրած ճանաչել ՀՀ ընտրական օրենսգրքի 43-րդ հոդվածի 6-րդ մասի 3-րդ կետը: Մինևույն ժամանակ առաջարկվում է Օրենսգրքի 43-րդ հոդվածի 7-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Սույն հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետով նախատեսված դեպքերում տարածքային ընտրական հանձնաժողովի կազմի չձևավորված մասն ընտրում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը՝ սույն օրենսգրքի 143-րդ հոդվածով սահմանված նախապատվության քվեակարգով»: Նշված դրույթի խմբագրման անհրաժեշտությունը պայմանավորված է 43-րդ հոդվածի 6-րդ մասի 3-րդ կետը ուժը կորցնելու հանգամանքով:

5.2.1. Առաջարկվում է նաև Ընտրական օրենսգրքի 43-րդ հոդվածի 12-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Տարածքային ընտրական հանձնաժողովների նախագահներին, հանձնաժողովների նախագահների տեղակալներին և հանձնաժողովների քարտուղարներին ընտրում են համապատասխան հանձնաժողովներն իրենց կազմերից, իրենց անդամների կողմից առաջադրված թեկնածուներից՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի տեղակալի և քարտուղարի ընտրության համար սահմանված կարգով»:

Նշված հոդվածի խմբագրման անհրաժեշտությունը պայմանավորված է նորմի ոչ բավարար հստակությամբ, քանի որ եթե բացակայում է «իրենց անդամների կողմից առաջադրված թեկնածուներից» դրույթը, ապա «Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի տեղակալի և քարտուղարի ընտրության համար սահմանված կարգով» դրույթը հնարավոր կլինի մեկնաբանել տարբեր կերպ, այդ թվում այնպես, որ Տարածքային ընտրական հանձնաժողովի նախագահին, նրա տեղակալին և քարտուղարին պետք է առաջադրեն հենց ԿՀՀ, այլ ոչ ՏՀՀ անդամները:

5.3. Տարածքային ընտրական հանձնաժողովների լիազորությունների ընդլայնման մասով.

Ներկայիս կարգավորման պայմաններում առկա է իրավական անորոշություն այն հարցի կապակցությամբ, թե հատկապես ինչպիսի

գործառույթներով պետք է տարածքային ընտրական հանձնաժողովները իրականացնեն վերահսկողություն Ընտրական օրենսգրքի պահանջների պահպանման նկատմամբ, ինչը փաստացի բերում է հանձնաժողովների բացարձակ անգործության: ՀՀ-ում անցկացված նախորդ ընտրությունների օրինակով միայն կարելի է փաստել, որ չնայած ԶԼՄ-ներով տարածված ընտրակաշառքի, քարոզչության կանոնների խախտման և այլ կոպիտ իրավախախտումների վերաբերյալ բազմաթիվ հրապարակումների, այդ դեպքերի կապակցությամբ սեփական նախաձեռնությամբ վարույթ Տարածքային ընտրական հանձնաժողովները չեն հարուցել:

Առաջարկ. ՀՀ ընտրական օրենսգրքի 52-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

1) «Վերահսկողություն է իրականացնում իր կողմից սպասարկվող տարածքում սույն օրենսգրքի պահանջների կատարման նկատմամբ, այդ թվում՝ իրականացնում է զանգվածային լրատվամիջոցներում հրապարակվող տեղեկատվության մշտադիտարկում՝ իր կողմից սպասարկվող տարածքում սույն օրենսգրքի պահանջների խախտումները հայտնաբերելու նպատակով: Համապետական ընտրությունների դեպքում իր կողմից հայտնաբերված խախտումների կապակցությամբ, օրենսդրությամբ սահմանված միջոցների ձեռնարկումից բացի, կազմում է հաղորդումներ և ներկայացնում դրանք կենտրոնական ընտրական հանձնաժողով»:

5.4. Ոստիկանության լիազորություններին, կուտակումներին և կողմնակի անձանց առնչվող հարցերի վերաբերյալ.

5.4.1. ՀՀ ընտրական օրենսգրքի 55-րդ հոդվածով սահմանվում է Ընտրական հանձնաժողովների և ոստիկանության գործակցությանն առնչվող դրույթ.

Կարծում ենք, որ անհրաժեշտ է վերոգրյալ դրույթում հստակեցնել և առանձնացնել քվեարկությունը և ընտրական հանձնաժողովների նիստերը: Դրա անհրաժեշտությունը պայմանավորված է հատկապես այդ երկու փուլերի՝ թիրախավորված և ընտրական խախտումների մեծ ծավալ ընդգրկող գործընթացներ լինելու հանգամանքով: Բացի այդ, ընտրական հանձնաժողովների հետ արդյունավետ գործակցության շրջանակներում ոստիկանության պարտականությունների հստակեցման, ինչպես նաև տեղամասային կենտրոններում և դրանց հարող տարածքներում, քվեարկության սենյակներում՝ առանց հանձնաժողովի նախագահի ցուցումին սպասելու ընտրախախտումների առավել օպերատիվ կանխարգելման կամ վերացման հնարավորություն ստեղծելու անհրաժեշտությունից ելնելով՝ գտնում ենք, որ առկա է ոստիկանության ծառայողների լիազորությունները ընդլայնելու կարիք: Նման անհրաժեշտությունը հիմնավորվում է նաև ՀՀ-ում անցկացված ընտրությունների ժամանակ տեղամասային կենտրոններում ընտրողների

ուղորդման, նրանց ընտրության վերահսկման, տեղամասային կենտրոնի հարակից տարածքում ընտրակաշառք բաժանելու և համանման խախտումների արձանագրման փորձով:

Առաջարկ. Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է Օրենսգրքի 55-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

1. Ոստիկանության կենտրոնական և տարածքային մարմինները, դրանց ծառայություններն ու ստորաբաժանումները պարտավոր են ապահովել ընտրությունների անցկացման բնականոն ընթացքը, ընտրական հանձնաժողովների ու դրանց անդամների անկաշկանդ գործունեությունը:

2. Ոստիկանությունը ընտրությունների հետ կապված միջոցառումներում, այդ թվում՝ քվեարկության և ընտրական հանձնաժողովների նիստերի ընթացքում, ապահովում է պատշաճ կարգ ու կանոն, ընտրական հանձնաժողովի նախագահի պահանջով աջակցում հանձնաժողովներին, ապահովում ընտրական փաստաթղթերի անվտանգ տեղափոխումն ու դրանց պահպանումն ընտրական հանձնաժողովներում:

3. Անկախ ընտրական հանձնաժողովի պահանջից՝ ոստիկանությունը ապահովում է.

1) քվեարկության օրը տեղամասային կենտրոնում կողմնակի անձանց գտնվելու, տեղամասային կենտրոնին հարող տարածքում մինչև 50 մետր շառավղով անձանց (անգամ մեկ անձի) շարունակական ներկայության, խմբերով հավաքվելու, մեքենաների կուտակումների բացառումը. տեղամասային կենտրոնին հարող տարածքում հասարակական կարգի պահպանումը.

2) քվեարկության ողջ ընթացքում, քվեարկության սենյակում անընդմեջ ներկա գտնվող առնվազն մեկ ոստիկանի միջոցով՝ ընտրողների կամքի վրա ցանկացած ճնշման բացառումը:

5.4.2. Առաջարկվում է ՀՀ ընտրական օրենսգրքի 22-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

3. «Արգելվում են քվեարկության օրը տեղամասային կենտրոնին հարող տարածքում մինչև 50 մետր շառավղով խմբերով հավաքվելը, անձանց (անգամ մեկ անձի) շարունակական ներկայությունը, այդ թվում՝ մեքենայով: Արգելվում է տեղամասային կենտրոնի մուտքին հարող տարածքում մեքենաների կուտակումը»:

Սույն դրույթը նոր խմբագրմամբ շարադրելը, հատկապես՝ մեկ անձի շարունակական ներկայությունը տեղամասային կենտրոնի հարակից տարածքում արգելող դրույթով լրացնելու անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ որևէ գործնական տարբերություն կարող է չլինել անձանց խմբերով հավաքվելու և ընդամենը մեկ անձի շարունակական ներկայության միջև, եթե այդ անձի/անձանց ներկայությունը պայմանավորված է քվեարկողներին ուղորդելու նպատակով, կաշառք բաժանելու կամ կատարված քվեարկության արդյունքները ճշտելու նպատակով: Միննույն ժամանակ, հաշվի առնելով այն, որ նշված դրույթի հիման վրա արդեն իսկ առաջարկվել է լրացնել Օրենսգրքի՝ Ոստիկանության պարտականությունները սահմանող 55-րդ հոդվածը, կրկնությունից

խուսափելու նպատակով Ընտրական օրենսգրքի 22-րդ հոդվածի 3-րդ մասի կատարման ապահովման պարտականությունը ոստիկանությանը վերապահելուն առնչվող դրույթը հանվել է:

6. ՀՀ ընտրական օրենսդրության խախտման համար սահմանված պատասխանատվության կիրառման մեխանիզմների վերաբերյալ.

- Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 254-րդ հոդվածով սահմանվել է, որ.
- Վարչական իրավախախտում կատարելու մասին արձանագրությունը 40.1 – 40.4, 40.6 - 40.11, 40.13, 40.14 հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով կազմում է իրավասու ընտրական հանձնաժողովը,
 - Օրենսգրքի 40.12 հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով՝ համապատասխան պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարը:

6.1. Հետևաբար Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով հստակ սահմանված չէ 40.1 – 40.4, 40.6 - 40.11, 40.13, 40.14 հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարչական իրավախախտում կատարելու մասին արձանագրությունը կազմող մարմինը: «Իրավասու ընտրական հանձնաժողով» անորոշ եզրույթի տարաբնույթ մեկնաբանման և կիրառման արդյունքում առկա է համապատասխան զանցանքների քննության անհնարինության վտանգ՝ արձանագրությունը կազմող հանձնաժողովի անհասցե մնալու պատճառով: Այսինքն, Տարածքային ընտրական հանձնաժողովը, ինչպես նաև Կենտրոնական ընտրական հանձնաժողովը կարող են ձեռնպահ մնալ վարույթ հարուցելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելուց՝ իրենց վերագրելի չհամարելով համապատասխան խախտման դեպքում արձանագրություն կազմելու պարտականությունը:

6.2. Ինչ վերաբերում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 40.12-րդ հոդվածին, ապա այն պատասխանատվություն է նախատեսում թեկնածուների, կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների կողմից նախընտրական քարոզչության սահմանված կարգի խախտման դեպքում ընտրական հանձնաժողովի խախտումը վերացնելու որոշման պահանջները չկատարելու համար, մինչդեռ որպես արձանագրություն կազմող մարմին, մատնանշված է «համապատասխան պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարը», ինչն ակնհայտորեն իրավաչափ չէ: Տվյալ դեպքում որպես արձանագրություն կազմող միակ մարմին պետք է հանդես գա այն ընտրական հանձնաժողովը,

որը կայացրել է նախընտրական քարոզչության սահմանված կարգի խախտումը վերացնելու վերաբերյալ որոշումը:

6.3. Հարկ ենք համարում նշել նաև, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 40.7-րդ հոդվածով պատասխանատվություն է նախատեսվում զանգվածային լրատվության միջոցներով նախընտրական քարոզչության իրականացման համար օրենքով սահմանված կարգը խախտելու համար և այս իրավախախտման համար որպես վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմող մարմին մատնանշված է իրավասու ընտրական հանձնաժողովը (ՀՌԱՀ), այն դեպքում, երբ «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքով նույն պարտականությունը դրվել է նաև Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի վրա: Այսպես՝ նախընտրական քարոզչության սահմանված կարգի խախտումներ հայտնաբերելու դեպքում ՀՌԱՀ-ը դիմում է դատարան՝ տվյալ հեռուստառադիոընկերությանը օրենքով սահմանված կարգով պատասխանատվության ենթարկելու հայցով: Տարբեր են նաև Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 40.7-րդ հոդվածով սահմանված տուգանքների չափերը նույն իրավախախտումների համար «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքով սահմանված տուգանքների չափերից: Այս տեսանկյունից առկա են առերևույթ հակասություններ երկու իրավական ակտերի միջև:

6.4. Իրավասու ընտրական հանձնաժողովի հստակեցման հետ կապված խնդիրը փորձ է արվել կարգավորել «Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով, որով սահմանվել է, որ ընտրությունների ոլորտում վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթ է հարուցում և իրականացնում Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից⁶ (բացառություն է սահմանվել հեռուստատեսության և ռադիոյի ոլորտի մասով և սահմանվել է, որ հեռուստատեսության և ռադիոյի ոլորտում վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթ հարուցում և իրականացնում է Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը): Այնուամենայնիվ, համարում ենք, որ նման կարգավորումը չի կարող ծառայել որպես արդյունավետ լուծում՝ ընտրախախտումների տեսակներից և ազդեցության շրջանակից ելնելով: Կարծում ենք, որ անհրաժեշտ է Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով հստակեցնել «իրավասու ընտրական հանձնաժողով» եզրույթը՝ սահմանելով ընտրության ոլորտին

⁶ Մանրամասն տես՝ http://parliament.am/draft_docs6/K-317.pdf:

առնչվող յուրաքանչյուր վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմման համար պատասխանատու հանձնաժողովին:

6.5. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Տարածքային ընտրական հանձնաժողովը վերահսկողություն է իրականացնում իր կողմից սպասարկվող տարածքում օրենսգրքի պահանջների կատարման նկատմամբ (ԸՕ, հոդված 52), իրավախախտումների բացահայտման և արդյունավետ քննության ապահովման տեսակետից առավել նպատակահարմար է սահմանել ներքոհիշյալ իրավախախտումների դեպքերում Տարածքային ընտրական հանձնաժողովի՝ արձանագրություն կազմելու լիազորությունը.

1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 40.2, 40.4, 40.11, 40.13, 40.14 հոդվածներով, ինչպես նաև՝ 40.1, 40.3, 40.7, 40.8, 40.9, 40.10, 40.12 հոդվածներով նախատեսված իրավախախտումների դեպքերում (եթե խախտումը տարածում կամ ազդեցություն ուներ միայն կոնկրետ տարածքային ընտրական հանձնաժողովի սպասարկման տարածքում, իսկ 40.12-րդ հոդվածով սահմանված իրավախախտման դեպքում՝ նախընտրական քարոզչության սահմանված կարգի խախտումը վերացնելու վերաբերյալ որոշումը Տարածքային ընտրական հանձնաժողովի կողմից կայացված լինելու դեպքում).
2. 40.1, 40.3, 40.7, 40.8, 40.9, 40.10, 40.12 հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով արձանագրություն կազմելու լիազորությունը կարող է վերապահվել կենտրոնական ընտրական հանձնաժողովին (բացառությամբ 1-ին կետով սահմանված դեպքերի):

Համարում ենք, որ քննարկման առարկա կարող է դառնալ նաև Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 40.10-րդ հոդվածով սահմանված իրավախախտման դեպքում վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու լիազորությունը ոստիկանությանը վերապահելու հարցը՝ համապատասխան իրավախախտումների բացահայտման, արձանագրման և քննության արդյունավետությունից ելնելով:

7. Ընտրական հանձնաժողովների անդամների համար նախատեսված սահմանափակումների ընդլայնման հարցի վերաբերյալ.

7.1. ՀՀ-ում անցկացված ընտրությունների փորձը, միջազգային և տեղական հասարակական դիտորդական կազմակերպությունների, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից ընտրական հանձնաժողովների գործունեությանը տրված գնահատականները, ինչպես նաև ընտրական հանձնաժողովների նկատմամբ հանրային վստահության ցածր մակարդակը

հաշվի առնելով՝ գտնում ենք, որ անհրաժեշտ է լրացուցիչ միջոցներ ձեռնարկել հանձնաժողովների անկախության և անկողմնակալության աստիճանը, ինչպես նաև վերջիններիս նկատմամբ հանրային վստահության մակարդակը բարձրացնելու նպատակով, այդ թվում՝ ընդլայնելով այն անձանց շրջանակը, որոնք չեն կարող որպես անդամ ընդգրկվել ընտրական հանձնաժողովների կազմում:

Առաջարկ. Այսպես, առաջարկվում է ընդլայնել հանձնաժողովի անդամի՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 149-154.6-րդ հոդվածներով նախատեսված հանցանքների, ինչպես նաև դիտավորությամբ կատարված միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր հանցանքների համար դատվածություն ունենալու վերաբերյալ սահմանափակում նախատեսող դրույթի շրջանակը՝ ՀՀ ընտրական օրենսգրքի 41-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված վերոգրյալ դրույթը խմբագրելով հետևյալ կերպ.

“Ընտրական հանձնաժողովի անդամ չի կարող նշանակվել այն անձը, որը դատապարտվել է հանցագործության կատարման համար՝ անկախ դատվածությունը մարված կամ հանված լինելու հանգամանքից”:

Այսպիսով, նման ձևակերպման պարագայում այս շրջանակում կընդգրկվեն ոչ միայն Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 149-154.6-րդ հոդվածներով նախատեսված հանցանքների, ինչպես նաև դիտավորությամբ կատարված միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր հանցանքների կատարման համար դատվածություն ունեցող անձինք, այլև ցանկացած այլ հանցագործության համար նախկինում դատապարտված անձինք՝ անկախ դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու պահից հետո անցած ժամանակահատվածից:

Հաշվի առնելով ընտրական հանձնաժողովի անդամի նկատմամբ հանրային վստահության բարձր մակարդակի, ինչպես նաև դրանով պայմանավորված վերջինիս անկախ և անաչառ գործելու հնարավորությունների ապահովման անհրաժեշտությունը՝ գտնում ենք, որ ընտրական հանձնաժողովների անդամների համար ևս, ի թիվս այլ մարմինների, պետք է նախատեսվի բացառություն դատվածության իրավական հետևանքների տեսանկյունից: Արձանագրենք, որ համանման բացառություններ ներկայումս նախատեսված են դատավորի, դատախազի, քննչական կոմիտեի ծառայողի, հատուկ քննչական ծառայության ծառայողի, ոստիկանության ծառայողի, քրեակատարողական ծառայողի, ազգային անվտանգության մարմիններում ծառայողի, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի համար (ՀՀ քրեական օրենսգրքի 84-րդ հոդվածի 8-րդ մաս):

Հետևաբար, առաջարկվում է նաև լրացում կատարել ՀՀ քրեական օրենսգրքի 84-րդ հոդվածի 8-րդ մասում՝ համալրելով համապատասխան պաշտոն զբաղեցնող անձանց ցանկը՝ ընտրական հանձնաժողովների անդամով: Այս

լրացումը անմիջականորեն պայմանավորված է ՀՀ ընտրական օրենսգրքի 41-րդ հոդվածի 2-րդ մասում կատարվելիք վերոնշյալ փոփոխությամբ:

7.2. Առաջարկ. Նույն հիմնավորումներից ելնելով անհրաժեշտ ենք համարում հանձնաժողովի անդամների համար նախատեսել լրացուցիչ սահմանափակումներ՝ նախկինում ՀՀ ընտրական օրենսդրության պահանջների խախտման փաստերով պայմանավորված: Այսպիսով, առաջարկվում է ՀՀ ընտրական օրենսգրքի 41-րդ հոդվածի 2-րդ մասում նախատեսել, որ ընտրական հանձնաժողովի անդամ չեն կարող լինել նաև՝

- Ընտրական օրենսդրությունը խախտելու համար դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկված անձինք՝ դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո հինգ տարվա ընթացքում.
- Անձինք, որոնց ընտրական հանձնաժողովում ընդգրկվելու որակավորման վկայականը ուժը կորցրած է ճանաչվել համապատասխան որակավորման վկայական ստացած անձի կողմից ընտրական օրենսգրքի պահանջները խախտելու հիմքով՝ վկայականը ուժը կորցնելու պահից 5 տարվա ընթացքում.
- Անձինք, որոնք խախտել են ընտրական օրենսգրքի պահանջները, որպիսի փաստը հաստատվել է դատարանի կողմից՝ դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո 5 տարվա ընթացքում:

7.3. ՀՀ ընտրական օրենսգրքի 41-րդ հոդվածի 2-րդ մասը առանձին սահմանափակումներ է նախատեսում նաև տարածքային և տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամների համար: Մասնավորապես, տարածքային և տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամ չեն կարող լինել Ազգային ժողովի պատգամավորները, նախարարները և նրանց տեղակալները, համայնքների ղեկավարները, մարզպետները և նրանց տեղակալները, դատավորները, դատախազները, քննչական մարմիններում ծառայողները, ոստիկանությունում, ազգային անվտանգության, դատական ակտերի հարկադիր կատարման, քրեակատարողական, պրոբացիայի, փրկարար ծառայություններում ծառայողները, զինծառայողները, վստահված անձինք, ընտրություններին մասնակցող կուսակցության, համայնքի ղեկավարի և ավագանու անդամի թեկնածուի լիազոր ներկայացուցիչները, դիտորդները, թեկնածուները: Տարածքային ընտրական հանձնաժողովների անդամ չեն կարող լինել նաև ավագանու անդամները:

Առաջարկ. Գտնում ենք, որ վերոգրյալ ցանկը ենթակա է ընդլայնման՝ տարածքային և տեղամասային ընտրական հանձնաժողովների անկախության և հանրային վստահության մակարդակի բարձրացման նկատառումներից ելնելով:

Մասնավորապես առաջարկվում է բոլոր հանրային ծառայողների համար սահմանել ընտրական հանձնաժողովներում որպես անդամ ընդգրկվելու վերաբերյալ սահմանափակում: Նշված փոփոխությամբ պայմանավորված՝ անհրաժեշտություն կառաջանա փոփոխություն կատարել նաև «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածում, մասնավորապես, ուժը կորցրած ճանաչել 31-րդ հոդվածի 4-րդ մասով ամրագրված հետևյալ դրույթը. «Հանրային ծառայողը «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքով նախատեսված դեպքերում կարող է կատարել ընտրական հանձնաժողովի անդամի, բացառությամբ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամի կամ ընտրական հանձնաժողովում տեխնիկական սարքավորումը սպասարկող մասնագետի կարգավիճակից բխող աշխատանք»:

Առաջարկվում է իրավակարգավորումներ նախատեսել նաև համապատասխան ընտրություններին մասնակցող թեկնածուի մերձավոր ազգականների, ինչպես նաև թեկնածուների անմիջական ենթակայության տակ գտնվող աշխատողների համար՝ ընտրական հանձնաժողովներում որպես անդամ ընդգրկվելու իրավունքի սահմանափակման եղանակով:

8. Ղիտորդական կազմակերպությունների չեզոքության և անկողմնակալության պահանջների ապահովման վերաբերյալ.

2017 թվականի ապրիլի 2-ի խորհրդարանական ընտրությունների ընթացքում արձանագրվել են մի շարք դեպքեր, երբ հավատարմագրված տեղական ղիտորդական կազմակերպությունների ղիտորդների կողմից ակնհայտ կողմնակալ վարքագիծ է ցուցաբերվել քվեարկության ընթացքում ընտրություններին մասնակցող այս կամ այն կուսակցության կամ թեկնածուի օգտին: Նման բազմաթիվ փաստեր արձանագրվել են ընտրությունների ընթացքում ղիտորդություն իրականացրած կազմակերպությունների կողմից: Այնուամենայնիվ, ՀՀ ընտրական օրենսգրքում առկա չէ որևէ մեխանիզմ, որով հնարավոր կլիներ գնահատել ընտրությունների ընթացքում ղիտորդական կազմակերպության դրսևորած անկողմնակալությունը և չեզոքությունը՝ հաջորդող ընտրությունների ժամանակ տվյալ ղիտորդական կազմակերպության ղիտորդներին հավատարմագրելու հարցը որոշելու նպատակով: Նման մեխանիզմների բացակայության պայմաններում ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված՝ ղիտորդի անկողմնակալության և չեզոքության վերաբերյալ դրույթն ըստ էության վերածվում է հռչակագրային նորմի:

Քննարկման առարկա է նաև ղիտորդների հավատարմագրման գործընթացում որոշակի փոփոխությունների կատարման անհրաժեշտության հարցը՝ ղիտորդական կազմակերպության հիմնադիրների կամ ղեկավար մարմինների

անդամների կազմում՝ ընտրություններին մասնակցող կուսակցության անդամի կամ թեկնածուի մասով սահմանափակում նախատեսելու նպատակով:

9. Ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրության բնօրինակը՝ ԿԸՀ-ի կայքում հրապարակելու անհրաժեշտության վերաբերյալ.

Հայաստանի Հանրապետությունում ընտրությունների նկատմամբ հանրային վստահության ցածր մակարդակով պայմանավորված՝ անհրաժեշտ ենք համարում օրենսդրությամբ լրացուցիչ մեխանիզմների սահմանումը ընտրությունների, այդ թվում՝ ընտրությունների արդյունքների ամփոփման գործընթացը առավել թափանցիկ և վերահսկելի դարձնելու նպատակով: Ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրության բնօրինակի հրապարակայնության ապահովումը՝ այն անմիջապես ընտրությունների արդյունքների ամփոփումից հետո տեղամասային ընտրական հանձնաժողովի կողմից սկանավորելու և Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում տեղադրելու միջոցով (ներբեռնելու հնարավորությամբ) էականորեն կընդլայներ ընտրությունների արդյունքների ամփոփման գործընթացի նկատմամբ հանրային վերահսկողության հնարավորությունները, ինչպես նաև կնվազեցներ տարածքային ընտրական հանձնաժողովներում՝ քվեարկության արդյունքների արձանագրության տվյալները փոփոխելու հնարավորությունը: Քվեարկության արդյունքների արձանագրության լայն հանրային մատչելիության ապահովումը հնարավորություն կտա ընտրական գործընթացի նկատմամբ վերահսկողություն իրականացնող սուբյեկտներին արդյունավետորեն վերահսկելու ընտրությունների արդյունքների ամփոփման գործընթացի իրականացման ճշգրտությունը, հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ արձանագրությունը ստորագրում են հանձնաժողովի նախագահը, քարտուղարը և անդամները: Տեղամասային ընտրական հանձնաժողովների կողմից սկանավորման գործընթացը ապահովելու անհնարինության դեպքում առնվազն անհրաժեշտ է այն իրականացնել տարածքային ընտրական հանձնաժողովներում՝ ընտրողների ցուցակների սկանավորման հետ միաժամանակ:

Իրավունքի զարգացման և պաշտպանության հիմնադրամ